26Ա. **Տպարան Ա. Էջմիածնի եւ Ա. Սարգսի Ջօրավարի.** — Յովհ. վարդապետ. եաք՝ Լիվօնոյի մէջ հայ տպագրութիւնը սկսած է 1670 ին և շարունակուած մինչեւ 1700 ի սկիզբները : — Մէկ քանի գիրքեր տպարանի յիշատակութիւն բնաւ չունին , բայց տառերուն ու ձեւերուն նոյնութիւնն ապացոյց է թէ Լիվօնոս բացուող այս գործատունը մէկ մասն էր բազմեպատ ՈՍԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ Մարսիլիոյ գործատան:— Այս քաղաքը տպուած գիրքերն են 1670 ին՝ **Պարտէզ հոգեւոր** (Ա. տիպ) թարգմանիչ՝ Կ. Պոլսեցի Յովհ. վրդ., սրբագրիչ՝ Ադրիանացի Կարապետ վրդ. : — 1691 ին՝ **Պերականութիւն** (Էջմիածնի մէջ Վարդան Յունանեան կաթոլիկ Վարդապետէն որացուած և Հռոմ անցնելով Պապական եղած Առաքելեան Խաչատուր ուսումնական վարդապետի հեղինակութեամբ) : — 1696 ին՝ **Պատմութիւն կայսերն Փոնցիանոսի:** — 1697ին՝ **Պատմութիւն դարձի եւ վկրտութեան Յովհաննու Յովսէփայ Պապիտիեան մեծանուն հրէի բարուցոյ** (խուպերենէ թրգմ. Յակոբ Վ. Ջրպետեան) : — 1698 ին՝ **Բառգիրք Հայոց.** Էջմիածնայ Երեմիա վրդ.ի (աշխատասիրութեամբ Եդեսիացի Սարգիս Եպսկ.ի): Այս բառգիրքը 30 տարի վերջ կրկին տպագրուած է , պարունակելով Ա.ծ.աշունչի , Աշխարհագրութեան , Բուսաբանութեան և Բժշկութեան (Գալիանոս) բառեր , նաեւ Վարդան վրդ.ի Աշխարհացոյցը , մեն մի էջ՝ սատեղագարդ ջուրքերով, ընդ ամենը 576 երես. վերջին թուղթը նուիրուած է Յիշատակարանին՝ ուր կը հանդիպինք «հարատագոյն բառարան» (?) դրուատիքին , տպագրութեանը սատարող Պրն. Մուրատին և իր ծնողաց , նաեւ Տեւլէք , Խաչեր , Սոեփան և Անտոն տպագրիչներուն : — 1698 ին **Աշխարհագրութիւն** (Մ. Խորենացիի) , «Ադուեսագիրք»ով միասին : — 1701 ին՝ **Թէոփիլոս.** «այսինքն խօսակցութիւն Թեոփիլոսի ընդ վարդապետին՝ յաղագս ճշմարտութեան և ջերմեռանդութեան» , 240 էջ՝ գծագիր, երկասիրողն անձանաչ : — 1702 ին՝ **Պարզաբանմամբ Հռովմէական :** — Այս թուականէն անդին՝ Պոլիս կը շարունակուի համանուն տպարանը՝ որուն պիտի հանդիպինք կրկին ԹՈՒՐՔԻՈՅ բաժինին մէջ :

ԵՐԵՄԻԱ ՎՐԴԻ "ԲԱՌԳԻՐՔ ՀԱՅՈՑ,,Ի
Բ. ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ Յրդ. ԷՋԸ

# ԲՈՏԱԿ

•

27. **Տիմոթէոս Պառնուկ** (= Agnelli) Ատրիներուն եպիսկոպոսը 1690 ին քաղաքիս մէջ տպագրած է Ա. անգամ ըլլալով **Պատանց Թուղթը** որ սա վերտառութիւնն ունի . «Թուղթ սիրոյ և միաբանութեան մեծի կայսերն Կոստանդիանոսի և Ս. Սեղբեստրոսի Վիւնա Պափին և Տրդատայ Հայոց արքայի , և Ս. Գրիգորի Հայոց Լուսաւորչին , **ստ-**